

Տեղեկագիր

Թիվ 8 (44)
Օգոստոս 2009թ.

Newsletter

Issue 8 (44)
August 2009

Նոր կուրսը ձևավորված է

Ավարտվեց ԱՌԿ-ի ամառային նախապատրաստական երկամսյա դասընթացը և ետևում մնացին ավարտական

ներկայացուցումներն ու քննությունները: Սակայն ամառային դասընթացի 36 մասնակիցներից չորսի համար այդ քննությունները վերջին գործն էին,



որ իրենք արեցին ԱՌԿ-ում, գոնե՝ այս տարի: Գյուղատնտեսական տնտեսագիտության հիմունքներից ստացած ցածր գնահատականը նրանց թույլ չտվեց վերջնականապես որակավորվել որպես ԱՌԿ-ի կրտսեր կուրսի ուսանողներ: Անշուշտ, նրանք կարող են կրկին փորձել հաջորդ տարի:

Այսպիսով, սեպտեմբերի 1-ից ԱՌԿ-ի կրտսեր կուրսում կսովորեն երեսուներկու ուսանողներ, այդ թվում՝ չորսը փրատամի Հանրապետությունից:



Զորս առարկաներից նախապատրաստական դասընթացն անցկացրած դասախոսների միասնական կարծիքի համաձայն, ԱՌԿ-ը 2009-2010 ուսումնական տարում կունենա ստեղծագործ ու աշխատասեր կրտսեր կուրս:

Աղջիկների թիվը գերազանցում է տղաների թիվը. առ այսօր ԱՌԿ-ի բոլոր տարիների ուսանողների մեջ աղջիկների ու տղաների հարաբերակցությունը միշտ էլ եղել է աղջիկների օգտին: Ինչ վերաբերում է վրացիներին, այս տարի բոլոր չորս ուսանողներն էլ Բաթումի Շոթա Ռուսթավելի անվան պետական համալսարանից են՝ երեք աղջիկ, մեկ տղա:

Հետաքրքրական է (մասն՝ գոհացուցիչ), որ գյուղական վայրերից եկած ուսանողների թիվն այս տարի համեմատաբար ավելացել է՝ կազմելով 30 տոկոս: ○

Summer courses over

The ATC Summer Preparatory Course is now over and final presentations and exams are behind. However, for four of the 36 Summer Course participants the final exams were the last thing they did at the ATC this year; their low grades in the core course, Ag Economics, did not allow them to qualify for becoming juniors of the ATC, so they will be continuing their studies at the Agrarian University. But they can try again next year.



Thus, thirty-two juniors, among them four from the Republic of Georgia, will be attending the ATC starting from September 1. According to the instructors having taught the preparatory class, the 2009-2010 academic year will have a very creative and hardworking group of ATC juniors.

Traditionally, there are more girls than boys in the junior class, which has been the case with all ATC classes so far. All four Georgian students are from the Batumi Shota Rustaveli State University.

The share of students from rural areas of Armenia and Georgia is over 30%. This is a higher percentage compared with the previous year. ○



Պրակտիկային նվիրված խորհրդածողով

Օգոստոսի վերջին ավանդաբար տեղի է ունենում ԱՌԼԿ-ի ամառային ուսումնաարտադրական պրակտիկայի վերաբերյալ ամենամյա խորհրդածողովը, որի ժամանակ ԱՌԼԿ-ի ուսանողները հաշվետվություններ են ներկայացնում իրենց անցկացրած ութշաբաթյա պրակտիկայի մասին: Ավանդաբար խորհրդածողովն անցկացվում է Ծաղկածորում, որտեղ խաղաղ բնությունն ու առողջարար օդը փոխհատուցում են ուսանողների կատարած բավականին լարված աշխատանքը:

ԱՌԼԿ-ի կրտսեր կուրսի ուսանողներին այս տարի հյուրընկալված ընկերություններից շատերը մեր ավանդական գործընկերներն են՝ Կոկա-Կոլան, Գրանդ Քենդին, Էյ Սի Դի Այ/ՎՕԿԱ-ն, ԱԳԶԿ-ն, ԳԱՖ-ը, ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկը, Կանաչ արա-հետը, Աշտարակ Կաթը և այլք: Միակ բանը, որի շուրջ ԱՌԼԿ-ը լրացուցիչ պայմանավորվում է այդ ընկերությունների հետ, այն է, թե իրենք քանի ուսանողի կարիք ունեն և երբ է սկսվում ութշաբաթյա պրակտիկայի ծրագիրը: Որոշ դեպքերում մենք նույնիսկ չենք կարողանում ապահովել մեր գործընկերների համար ցանկալի թվով ուսանողների մասնակցությունը, քանի որ պետք է ապահովենք ագրոբիզնեսի ոլորտի ձեռնարկությունների (որոնք կազմում են պրակտիկայի անցկացման վայրերի առյուծի բաժինը), միջազգային կազմակերպությունների, բանկերի և այլ ընկերությունների բա-

վարար ծածկույթը: Ինչ վերաբերում է նոր ընկերություններին, այս տարի ավելացել են սուպերմարկետ, աուդիտորական ընկերություն, գյուղական ֆինանսավորմամբ զբաղվող կազմակերպություն, ինչպես նաև Գունաստանի Տեսալոնիկի քաղաքում գտնվող Ամերիկյան



ֆերմերային դպրոցը, որի և ԱՌԼԿ-ի միջև արդյունավետ գործակցություն է ծավալվել: Այդ գործակցության շրջանակում այս տարի ԱՖԴ-ում պրակտիկա անցկացրեցին ԱՌԼԿ-ի երեք ուսանողներ: Իրենց հերթին, ԱՖԴ-ի երեք ուսանողներ էլ ներկայումս իրենց ուսումնաարտադրական պրակտիկան են անցկացնում Հայաստանի երեք կազմակերպություններում՝ Կոկա-Կոլա Հելենիկ Բոթլերսում, ԳԱՖ-ում և ԱԳԶԿ-ում:

ԱՌԼԿ-ի բոլոր կրտսերները գոհ են, որ իրական բիզնեսի փորձառություն են ձեռք բերել: Նրանցից ոմանք նույնիսկ չբավարարվեցին մեկ տեղում պրակտիկա անցկացնելով և զուգահեռաբար օգտագործեցին նաև երկրորդ հնարավորությունը՝ նպատակ ունենալով առավել արդյունավետ կերպով հավասարակշռել արտադրական, մարկետինգային, ֆինանսական և կառավարման անհրաժեշտ հմտություններ ձեռք բերելու հնարավորությունները: Պրակտիկայի վերաբերյալ ներկայացումները ցույց տվեցին, որ ուսանողները շատ գոհ էին թե պրակտիկայի ընթացքում ստացած փորձառության և թե հաստատված նոր գործարար կապերի համար: ○

Internship conference in Tsaghkadzor

Late August is traditionally the time of the ATC internship annual conference, when the ATC students report on their summer internship programs. Tsaghkadzor is traditionally the place of the conference where the peaceful nature and healthy air rewards the hard work the students have done during their internships.



Most of the companies having hosted the ATC juniors this year are our traditional partners: Coca-Cola, Grand Candy, ACDI/VOCA, CARD, FAA, Green Lane, ACBA-Credit Agricole Bank, Ashtarak Kat, and others. The only new arrangement that the ATC makes with those companies every year is how many students they need for internship and when they are going to start the eight-week internship. In some cases we cannot even provide the number of students they would like to have as interns since we have to ensure sufficient coverage of agribusiness enterprises (which is always the lion's share), international agencies, banks, and other entities. Among the new companies there is a supermarket, an auditing company, a rural finance agency in Armenia and the Dimitris Perrotis College of the American Farm School in Thessaloniki, Greece. Three ATC students spent their summer internships in Greece due to the developing cooperation between the AFS and the ATC. In turn, three American Farm School students are currently completing their internship programs here in Coca-Cola Hellenic Bottlers, FAA, and CARD.

All ATC juniors were pleased with the experience they acquired during their internships. Some of them used two internship places during the eight weeks, which allowed them to simultaneously get exposed to production, marketing, and finance aspects of the projected internship program. The presentations indicated that the students were very pleased with the experience and the connections they have acquired during the 8 weeks. ○



Պրակտիկա ACDI/VOCA-ում

Արուսյակ Ռուբենյան, ԱՌԿ 4



Յոթնամյա Արուսյակը հունիսի 15-

ից մինչև օգոստոսի 7-ը էլ Սի Դի Այ/ՎՕՎԱ-ում անցկացրած ուսումնաարտադրական պրակտիկայի մասին տեղեկություն տալն է: Դա շահույթ չհետապնդող մասնավոր ամերիկյան կազմակերպություն է, որը տնտեսական զարգացման ծրագրեր է իրականացնում տարբեր երկրներում:

Նախատեսված ութ շաբաթների ընթացքում համակուրսեցի Լուսինե Տոնոյանի հետ շատ հետաքրքիր պրակտիկա անցկացրեցինք էլ Սի Դի Այ/ՎՕՎԱ-ի կողմից իրականացվող «Ջրից դեպի շուկա» ծրագրի շրջանակում: Այդ ծրագրի նպատակն է գյուղատնտեսական նորարարական տեխնոլոգիաների ներմուծման միջոցով ավելացնել փոքր գյուղատնտեսողների եկամուտները Հայաստանում: Ծրագիրը մեկնարկել է 2007թ. փետրվարին և շարունակվելու է մինչև 2011թ. հոկտեմբերը: Լուսինեն և ես ընդգրկվել էինք «Գնիր հայկականը» մարկետինգային նախագծում, որը ՋՊՇ ընդհանուր ծրագրի կարեվորագույն մասերից մեկն է: Նախագծի հիմնական նպատակն է ընդլայնել տեղական արտադրության գյուղմթերքի շուկայաբաժինը և նպաստել Հայաստանում արտադրված մթերքի նկատմամբ սպառողի հավատարմությանը:

Ինչ վերաբերում է ծրագրում մեր ունեցած դերին, ապա մենք կատարեցինք տեղական շուկայում տիրող ընթացիկ իրավիճակի ուսումնասիրություն և վերլուծություն: Մեզ գլխավորապես հետաքրքրում էին հայաստանյան սպառողի նախընտրությունները սպառողական զանբյուրի ընտրության հարցում՝ արդյոք նրանք նախընտրում են հայկական, թե ներմուծված մթերքներ և ինչ չափանիշներով են առաջնորդվում իրենց ընտրությունը կատարելիս: Պրակտիկան մեզ համար մարկետինգի ոլորտում ունեցած տեսական գիտելիքներն օգտագործելու և գործնական փորձ ձեռք բերելու հիանալի հնարավորություն էր: Սպառողի նախընտրությունների վերաբերյալ սպառողների շրջանում անցկացված հարցումները, ինչպես և 11 սուպերմարկետների աշխատակազմերի հարցումները տևեցին 6 շաբաթ. ընդհանուր առմամբ հարցվողների թիվը կազմեց համապատասխանաբար 121 և 45: Վերջին երկու շաբաթների ընթացքում մենք կատարեցինք հավաքված տվյալների մուտքագրում, մշակում և վերլուծություն:

Կարծում եմ, հարցումները շատ արդյունավետ էին թե կազմակերպության և թե մեզ համար: Հարցումների և ընդհանուր տեղեկատվության արդյունքների հիման վրա մենք առաջարկեցինք իրականացնել ապրանքախթանման համապատասխան ծրագրեր, որոնք կխթանեն տեղական մթերքների սպառումը:


Էլ Սի Դի Այ/ՎՕՎԱ-ում ուսումնաարտադրական պրակտիկայից մենք մեծապես շահեցինք: Մասնագիտական փորձից զատ, մենք ձեռք բերեցինք նաև հաղորդակցական հմտություններ, որն, ինչպես գիտեք, ԱՌԿ-ը կարևորում է: Մենք նաև ընկերներ ձեռք բերեցինք այդ հեղինակավոր կազմակերպությունում, որտեղ տիրում է գերազանց աշխատանքային մթնոլորտ և որտեղ աշխատում են ԱՌԿ-ի մի քանի շրջանավարտներ: ○

Internship in ACDI/VOCA

By Arusyak Rubenyan, ATC 4

The purpose of this article is to provide some information about our internship from June 15 to August 7 in ACDI/VOCA, a US-based private non-profit international development organization.

Lusine Tonoyan and I had a very interesting and effective 8-week internship at ACDI-VOCA Armenia's Water to Market program. The purpose of the program is to introduce innovative growing techniques to increase smallholder incomes in Armenia. The program was launched in February 2007 and will continue until October 2011. We were involved in "Buy Armenian" marketing project, one of the main parts of Water to Market program. The main objective of the project is to enlarge the market share of locally produced products as well as to increase the customer loyalty to the products made in Armenia.



Our role in this project was to conduct a survey in order to find out the current situation in the local market and make situation analysis. The main point was to find out the preferences of Armenian customers in choosing their consumer basket: do they prefer Armenian products or imported ones and what leads them while making their choice. This was a very good opportunity for us to use our theoretical knowledge in the field of marketing and to acquire some real life experience. During first 6 weeks of our internship we conducted a survey of consumer preferences and supermarket personnel in 11 supermarkets of Yerevan. The total number of consumer and seller respondents reached 121 and 45 respectively. After conducting this survey, we performed input and processing of raw data, as well as made data analysis.

The survey was a very effective one both for the organization and for us. Based on the results of the survey and other information we got, we made our recommendations for further development of the program and suggested to implement a promotional program stimulating the consumption of locally produced products.

We benefited a lot from the internship at ACDI-VOCA. In addition to professional experience we also acquired communication skills which the ATC attaches much importance to. We also obtained good friends in a good organization. We liked very much the working environment at ACDI/VOCA, where several ATC graduates are working. ○

Հայաստանում երջանիկ փորձառություն ունեցանք

Վիկտոր Իվանովսկին, Իվանչե Դիմիտրիևսկին՝ երկուսն էլ Մակեդոնիայից և **Օլսի Նինին՝** Ալբանիայից, Հունաստանի Տեսալոնիկի Ամերիկյան ֆերմերային դպրոցի ուսանողներ են և այժմ երկամսյա ուսումնաարտադրական պրակտիկան են անցկացնում հայաստանյան երեք կազմակերպություններում: Ներքո-գետեղյալ հոդվածում նրանք անդրադարձել են երեք տեղերում անցկացվող իրենց պրակտիկային, ինչպես նաև Հայաստանում իրենց կեցությանն ու ընկերային կյանքին:

ԱԳԶԿ (Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն)

Անցած մի քանի շաբաթների ընթացքում մենք հնարավորություն ունեցանք մասնակցելու երեք կազմակերպություններում իրականացվող աշխատանքներին, ծանոթանալու կառավարման սկզբունքներին, ինչպես նաև հարաբերություններ հաստատելու տարբեր մասնագիտությունների տեր մարդկանց հետ:

Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոնում մեր հանձնարարություններին մեկը օրգանական գյուղատնտեսության մասին տվյալներ հավաքելն էր: Մեր հավաքած տեղեկությունները հնարավորություն տվեցին գաղափար կազմելու առհասարակ օրգանական գյուղատնտեսության մասին և այն մասին, թե ինչպես է այն կիրառվում եվրամիության անդամ և ոչ անդամ երկրներում: Մեր տեղեկությունները հիմնականում վերաբերում էին Հունաստանին, Մակեդոնիայի մախիկի հարավլավական հանրապետությանը և Ալբանիային:

Մյուս աշխատանքը կատարեցինք գյուղի զարգացման բաժնում՝ մարկետինգային պլան կազմեցինք հանրահայտ Ջոն Դիլըր ընկերության մեքենասարքավորումները Հայաստանում իրացնելու նպատակով: Այդ մեքենաները չափազանց թանկ են և անհամատեղելի հայ ֆերմերների տարեկան միջին եկամուտների մակարդակի հետ, այդ առումով մենք դժվարությամբ գտանք ապրանքախթանման համապատասխան ուղիներ:



ԱԳԶԿ-ն ԱՄՆ գյուղընթացարտամենտի հովանու ներքո 2005թ. հիմնադրված ոչ կառավարական կազմակերպություն է, որի առաքելությունն է աջակցել ֆերմերներին և ագրոբիզնեսի ոլորտին սննդամթերքի և հարակից արտադրանքի արտադրության և իրացման գործում՝ ապահովելով եկամուտների ավելացում, աշխատատեղերի ստեղծում և գյուղական բնակչության կենսամակարդակի աճ:

Կոկա-Կոլա Հելենիկ Բոթլըրս

Կոկա-Կոլա Հելենիկ Բոթլըրս ընկերությունում մեր պրակտիկան շատ հետաքրքիր էր անցնում: Կարճ ժամանակաշրջանում մենք հնարավորություն ունեցանք այցելելու տարբեր բաժիններ՝ ֆինանսական, հաշվապահական, մարկետինգի, առաքման, կադրերի և իհարկե՝ վերամշակման: Այս ընկերությունում գործում է բարձրակարգ կառավարման, արտադրանքի որակի հսկողության հոյակապ համակարգ, որը բարձրորակ արտադրանք թողարկելու և ընկերությունը կառավարելու գործում առկա հաջողության

We had a delightful experience in Armenia

Viktor Ivanovski, Ivanche Dimitrievski, both from Macedonia, and Olsi Nini from Albania are students of the Dimitris Perrotis College of the American Farm School at Thessaloniki, Greece and are now spending their two-month internship in three Armenian companies. Below is a brief evidence of their experiences with the internship places as well as a reflection of their stay and social life in Armenia.

CARD (Center for Agribusiness & Rural Development)

During the past few weeks we had an opportunity to take part in the work and learn the management principles used in three organizations. Thus, we were able to experience different management techniques as well as develop friendly relationships with coworkers of different backgrounds.



One of our tasks in CARD was to collect data related to organic farming in Europe, more specifically Greece, FYROM, and Albania, which gave us a general idea of what organic farming is and how it works in EU member and non-member countries.

Our next activity took place in the Rural Development department where we were asked to create a marketing plan for John Deere agricultural machines. These machines are very expensive regarding the annual average income of the Armenian farmers, and it was very difficult for us to find relevant promotional ways for farmers to be able to purchase them.

CARD is an NGO founded under USDA patronage in 2005. Its mission is to support farmers and agribusinesses in production and marketing of food and related products to increase incomes and create jobs leading to sustainable livelihood for Armenian rural population.

Coca-Cola

Our internship at Coca-Cola Hellenic Bottlers was perhaps the most interesting one from the educational standpoint. During this small period of time we had the opportunity to visit different departments such as: Finance, Accounting, Root Settlement, Marketing, Logistics, Human Resources, and of course the processing unit of the company. We were astonished by the sophisticated management and quality control techniques that the employees were practicing in order to successfully run the company and to achieve the best performance results. Furthermore, we appreciate very much the willingness of employees to share information with us. Their ability to explain specific and interesting details and still keep an admirable level of proficiency was simply for high regards. Thus, visit to this company was not just a cognitive one but also a profound inspiration for our future career

գրավականն է: Մեզ զարմացրեց նաև այն հանգամանքը, թե ինչպես են ընկերության աշխատակիցները կարողանում առանց իրենց հմուտ աշխատանքից կտրվելու այդպես մանրամասնորեն մեզ բացատրել արտադրական գործընթացները: Մի խոսքով, այս ձեռնարկություն այցելությունը մեզ համար ոչ միայն տեղեկատվական փորձառություն էր, այլև մեր հետագա կարիերայի համար ներշնչանքի մեծ աղբյուր:

ԳԱՖ (Գյուղատնտեսական ասոցիացիաների ֆեդերացիա)

ԳԱՖ-ում մենք հասու եղանք այդ կազմակերպության կատարած դերին և որպես կազմակերպության անդամների՝ ֆերմերների ստացած օգուտներին: Մենք այցելեցինք գյուղեր, որպեսզի ավելի լավ հասկանանք Հայաստանի գյուղատնտեսությունը, նոտիկից ծանոթանանք ֆերմերների կյանքին: Դա մեզ հնարավորություն տվեց առաջարկություններ անելու կազմակերպության կառուցվածքին, նրա ունեցած շուկային հարիր կոնկրետ ոլորտների զարգացման ռազմավարության, կազմակերպության աշխատանքի կոնկրետ ասպեկտների գնահատման համակարգի, կառավարման որակին ներկայացվող պահանջները բավարարելու և դրանց ինտեգրվելու, առողջապահական, անվտանգության, իրավական հարցերի, բնապահպանական քաղաքականության և գյուղի զարգացման վերաբերյալ: Հուսով ենք, ԳԱՖ-ի մեր փորձը հիմք կդառնա Հայաստանում, Հունաստանում, Մակեդոնիայում և Ալբանիայում գործող գյուղատնտեսական կոոպերատիվների միջև կապերի հաստատման համար:



Ընկերային կյանք

Հայաստանում գտնվելու ընթացքում ձեռք բերած մեր փորձի մի կարևոր մասն էլ հայկական մշակույթի հետ առնչվելն ու հայաստանյալ կենցաղով ապրելն էր: Այստեղ մենք հանդիպեցինք բոլորովին այլ մշակույթի ու մտածելակերպի, առնչվեցինք հինավուրց մի ժողովրդի պատմությանը, որն անկասկած հարստացրեց մեզ որպես անհատների, քանզի մենք այլ մշակույթ կրող ժողովուրդների ներկայացուցիչներ ենք: Առայժմ մենք այցելել ենք Խորվիրապ, Էջմիածին, ինքնատիպ ավանդույթներով հարուստ մի շարք գյուղեր և իհարկե Սևանալիճ, որտեղ մասնակցեցինք ԱՄՆ դեսպանության կազմակերպած տրիաթլոնի մրցումներին:

Մենք կարողացանք տեսնել ու զգալ Հայաստանը որպես հինավուրց ու եզակի մշակույթ ունեցող երկիր: Այդ եզակիությունը ակնհայտ է դառնում թեկուզև այն փաստով, որ Հայաստանն առաջին երկիրն է, որ քրիստոնեությունն ընդունել է որպես պետական կրոն: Հայաստանի մասին խոսելիս հնարավոր չէ չնշել նաև հայկական առատաձեռնության, հյուրասիրության և այլոց օգնելու պատրաստակամության մասին: Հայաստանի որ անկյունում էլ որ եղել ենք, զգացել ենք այդ ջերմությունն ու հյուրասիրությունը, բարեկամական վերաբերմունքը:

Նման քաջալերող և խաղաղասիրական միջավայրում գտնվելը մեզ մղում է սիրով ու ջանասիրաբար կատարել մեր աշխատանքային պարտականությունները: Հետևաբար, մենք ոչ թե ստիպված ենք աշխատել, այլ դա անում ենք մեծագույն հաճությամբ: Հայաստանյան պրակտիկան մեր կյանքի ամենաերջանիկ փորձառություններից մեկն էր, որի համար խորապես շնորհակալ ենք ԱՖԴ ղեկավարությանը հանձինս Դոն Սկոֆիլդի և Կոնստանտինոս Ռոցիոսի, ինչպես նաև պրակտիկայի անցկացման վայրերի աշխատակազմերին, մասնավորապես ԱՆԿ-ից Վարդան Ուռուտյանին և Արթուր Գրիգորյանին, ինչպես նաև ԳԱՖ-ի Ուեսթ բաժնի ղեկավար Տիգրան Հախնազարյանին: Շնորհակալություն, բարեկամներ:

sand lives.

FAA (Federation of Agricultural Associations)

FAA was the final place on completing our industrial work experience. The objectives for working with FAA were to: understand the role of FAA and the benefits that it provides to the farmer-members, make field visits in order to better understand the Armenian agriculture and farmers' life, develop a strategy for organisational development, suggest appropriate systems for measuring and ensuring necessary aspects of organisational performance, meet and integrate with organisational requirements for quality management, health and safety, legal stipulations, environmental policies, and rural development. Furthermore, such experience would possibly create relationships between Armenian, Greek, Macedonian, and Albanian cooperatives.

Social life

In addition to all the above experiences, being a part of the Armenian culture is another important aspect. In Armenia we found a completely different mentality, culture, history, which indeed enriched our current experience, since we come from different backgrounds. So far we have visited several places such as: Khorvirap, Etchmiatzin, different villages with their unique tradition, and finally Lake Sevan where we participated in a triathlon activity organized by the U.S. Embassy: we swam, run and bicycled with pleasure.

We had the opportunity to see Armenia as a country with ancient and unique history. The fact that Armenia was the first country in the world to accept Christianity at a national level is enough to prove this uniqueness. Another important aspect is



the Armenian generosity, hospitality and willingness to help. In all the places that we have visited so far we experienced warm welcome, hospitality and no hesitation of starting new relationships.

Being a part of this encouraging and peaceful surrounding armed us with motivation and eagerness to perform our work tasks on a high level. Consequently, we did not feel obliged but privileged to work. In fact, it was a delightful experience.

We highly appreciate the efforts of the DPC administration, particularly those of Don Schofield and Konstantinos Rotsios. We extend our gratitude also to the staffs of our internship companies and the ATC with special regards to Vardan Urutyan, Artur Grigoryan, and FAA TRC Department Head Tigran Haknazaryan who made our internship in Armenia possible, educative and hands-on. Many thanks, friends!



Supported by:



International Center for Agribusiness Research and Education
74 Teryan St., 0009 Yerevan, Armenia
Tel: (37410) 52-28-39, 56-96-70;
Fax: (37410) 56-62-21 E-mail: info@icare.am
www.icare.am/atc

Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոն . Երևան, Տերյան 74

